



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ԱՊՐԻԼ, 2015

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստաբար չոր Յիսուս, Կուր ինձ իմաստաբար զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 31

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ

**Ո**՛վ Տէր, քեզի ապաւինեցայ.  
թող ամօթով չմնամ բնաւ:  
Արդար ես դուն, ազատե՛ զիս:  
Ականջդ ինձի խոնարհեցուր, եւ փութա՛, ազատե՛ զիս:  
Ինձի պաշտպան, ապաստանարան եղիր,  
իմ փրկութեանս ապաստանը:  
Իմ ապաւենս եւ իմ անրոցս դուն ես.  
դուն ինքդ զիս առաջնորդե՛ եւ պաշտպանե՛,  
որպէսզի քու անունդ փառաւորուի:  
Ձիս դուրս բեր որոգայթէն, գաղտուկ ինձի դէմ լարուած,  
որովհետեւ դուն ես իմ ապաստանս:  
Քու ձեռքերուդ ես կը յանձնեմ իմ հոգիս,  
ո՛վ Տէր, Աստուած ճշմարտութեան, դուն որ փրկեցիր զիս:  
Դուն կ'ատես անոնք՝ որոնք սնոտի կուռքեր կը պաշտեն,  
մինչ ես քեզի՝ Տիրոջ վստահած եմ:  
Քու սիրովդ պիտի ցնծամ եւ ուրախանամ,  
որովհետեւ թշուառութիւնս տեսար, ճանչցար տառապանքներս,  
եւ զիս թշնամիին ձեռքը չմատնեցիր,  
այլ՝ վտանգէն զիս դուրս բերիր եւ զիս ոտքի կանգնեցուցիր:

## ՇԱՐԱԿԱՆ

**Պ**ովեա Երուսաղէմ ՎՏէր, յարեալ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա.

*Եկայք ժողովուրդք, երգեցէք տեառն, ալէլուիա:*

*Յարուցելոյն ի մեռելոց, ալէլուիա, որ զաշխարհս լուսաւորեալ, ալէլուիա:*

## ԱՂՈՐՔ

**Պ**ահապան ամեն այնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,  
ի նարիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



## ԵԼԻՑ ԻԱ (21) ԳԼՈՒԽ



### ԳԵՐԻՆԵՐՈՒ ԿԵՏ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ (21:1-11)

Տասնաբանեայ պատուիրանները սերտել է յետոյ, յառաջիկայ գլխուները ընդհանրապէս բացարթութիւններ են Տասնաբանեայ պատուիրաններուն, յաւելեալ մանրամասնութիւններով:

Այս գլուխը կը սկսի սարուկներու վերաբերեալ պատուերով, եւ անոնց նկատմամբ յարուկ վերաբերումոնք ցուցաբերել: Եւ այս պարագային եբրայեցի սարուկի մասին է խօսքը: Այս պատուիրանը Աստուած կու փայ նկատի առած գալիք ժամանակը, երբ եբրայեցիք ուրիշ ազգերու ծանօթանալով իրենք եւս սարուկներ պիտի ունենային եւ օրէնքը պտոր համար կը սահմանէր, կանխարգիլելու համար անարդարութիւնը: Հերաքրքրականօրէն սարուկը 6 փարի պիտի աշխարհի եւ 7-րդ փարին ազար արձակուի, որովհետեւ յախրեան սարուկ չի կրնար մնալ: Եթէ 7-րդ օրուան հանգիստը կապենք այս օրէնքին հետ, ապա կը նշանակէ որ այդ հանգիստը նաեւ ազարագրութիւն է: Այս պատուերը նաեւ եթէ կապենք ապագայի, պիտի տեսնենք այնտեղ եւս որ ոչ միայն եբրայեցի ժողովուրդը, այլ ամբողջ մարդկութիւնը հոգեւոր ստրկութեան վիճակէն վերջնական ազարագրութիւն պիտի ունենար: Միւս կողմէ, այս պատուիրանը նաեւ մտածել կու փայ, թէ կարծէք Աստուած կողմնակից է ստրկութեան: Բայց ընդհակառակը, Աստուած յաճախ նկատի կ'ունենայ մարդու մտածելակերպը եւ կ'որոշէր ոչ կարճ ճամբան, անով հասնելու իր նպատակին: Ուրեմն, Աստուած նախ իր ժողովուրդին մէջէն կ'ուզէ աստիճանաբար վերցնել ստրկութեան երեւոյթը, որպէսզի ի վերջոյ մղէ մարդիկը մտածելու թէ սարուկն ալ մարդ է, եւ ով որ սարուկին իրաւունքը զանց ընէ, անպատիժ պիտի չմնայ:

Ճիշդ է, այսօր մի գուցէ չկան, կամ քիչ, անցեալի ստրկութեան կերպեր, սակայն այսօր կան այլ ուրիշ ձեւի եւ կերպի ստրկութեան երեւոյթներ, գաղափարախօսութեան, վարչակարգի, դրամատիրութեան, կիներու, մանուկներու առեւանգում ու վաճառում: Այսպիսի բաներու մասին իբրեւ ստրկութիւն չեն խօսուիր, սակայն Աստուծոյ օրէնքը բոլոր ժամանակներու, բոլոր տեսակի ստրկութիւններու մասին կը խօսի: Այս մանրամասնեալ օրէնքները անոր համար, որպէսզի կամաց-կամաց ընկերութեան մէջէն չէզոքանայ հարուստի ու սարուկի դասակարգերը, որպէսզի մարդը մարդուն վրայ իշխող բռնապէր չդառնայ, այլ ճանչնայ դիմացինը իբրեւ մարդ:

Հերաքրքրականօրէն սակայն, կրնանք հարցնել թէ արդեօք ի՞նչ կապ կայ ստրկութեան այս հարցը Տասնաբանեայ պատուիրաններուն հետ: Իրականութեան մէջ Տասնաբանեայ օրէնքները կը խօսին հիմնական հարցերու մասին, իսկ ստրկութեան պարագան անտեսուած անոր համար, որ Աստուած գիտէր որ երկար պիտի չգոյատեւէր այդ, որովհետեւ Իր կամքն է որ մարդիկ հաւասար նկատուին, եւ ոչ թէ սարուկ:

### ՕՐԷՆՔՆԵՐ ՎԱՅՐԵՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՄԱՍԻՆ (21:12-27)

Սպաննելու պարագային երկու փարբերակ կը նշուի. կանխամտածուած եւ ոչ կանխամտածուած: Երկրորդի պարագային, որ պարահամար սպաննուած է, յարուկ տեղ մը կը ցուցնէ Աստուած, ուր սպաննողը պիտի ապաստանի, որպէսզի յանկարծ վրէժխնդրութեան պարագային զինք չսպաննեն: Իսկ եթէ կանխամտածուած է, այս պարագային ոչ մէկ ներում: Մի գուցէ խիստ վճիռ, բայց այս երեւոյթը որպէսզի հեռու պահէ մարդս սպաննութենէն:

Իսկ այն պարագային, երբ կ'ըսուի. «անձի տեղ անձ, ակռայի տեղ՝ ակռայ, աչքի տեղ աչք»: Արիկա չի նշանակեր անձնական վրէժխնդրութիւն, այլ խորքին մէջ դատարարներն են, որ պիտի լուծեն հարցը, օրէնքը գործադրելով օրինաւոր ձեւով: Միւս կողմէ, այս պատուիրանը եւս ցոյց կու փայ որպէս զգուշացում, որ չլլայ թէ այդպիսի արարքներու մէջ իյնայ մարդը: Որովհետեւ վերջ ի վերջոյ, Աստուածաշունչը եւ Աստուած կը սորվեցնէ հեռու մնալ վրէժխնդրութենէ, որովհետեւ Աստուած կ'ըսէ. «Իմն է վրէժխնդրութիւնը»: Նաեւ որպէսզի հարուցումը արդարացի ըլլայ: